**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 673 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահի Ռ. Քոչարյան
2 փետրվարի 2002 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

2 փետրվարի 2002 թվականի N 89

քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 673 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 895 որոշման 4-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիական ու ծառայողական զենքի և դրա փամփուշտների շրջանառությունը կարգավորելու մասին» N 673 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «գ» ենթակետով.

«գ) Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիական ու ծառայողական զենքի և դրա փամփուշտների առևտրի լիցենզիայի ձևը (կցվում է)»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2002 թվականի փետրվարի 2-ից:

**Հայաստանի Հանրապետության վարչապետ** **Ա. Մարգարյան**

*Հաստատված է*
*ՀՀ կառավարության 2002 թվականի*
*փետրվարի 2-ի N 89* որոշմամբ

Հաստատված է
ՀՀ կառավարության 2002 թվականի
փետրվարի 2-ի N 89 որոշմամբ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ВНУТРЕННИХ ДЕЛ

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF INTERNAL AFFAIRS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՈՒ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԶԵՆՔԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ

Սերիա - ՀԱ

# ԼԻՑԵՆԶԻԱ

№ ____

# ЛИЦЕНЗИЯ

на торговлю гражданским и служебным оружием и патронами к нему

LICENSE FOR TRADE OF CIVIL AND OFFICIAL ARMS AND THEIR CARTRIDGES

Կազմակերպության անվանումը
Наименование организации
Firm
..........................................................

Գտնվելու վայրը
Место нахождения
Place of location
..........................................................

Գործունեության վայրը
Место деятельности
Place of activity (address)
..........................................................

Տալու ամսաթիվը, տարեթիվը
Дата выдачи/Date of issue
..........................................................

Գործողության ժամկետը
Срок действия/Date of expiry
..........................................................

ՆԳՆ

..........................................
(նախարար)

Կ. Տ.

..........................................
(ստորագրություն)